# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ*

## *28.08.2018Թ. N 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

## *ՈՐՈՇՈՒՄՆԵՐ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 101*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

***Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2018 թվականի օգոստոսի 28-ի N9 արտահերթ նիստի օրակարգը.***

*1. Հրազդան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին*

*2. Հրազդան համայնքի սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին*

*3. Հրազդան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները, սոցիալական պաշտպանության բնագավառում Հրազդան համայնքի կամավոր խնդիրների և դրանց ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին*

*4. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի N50 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

*5. Մարզահրապարակ կահավորելու նպատակով տարածք հատկացնելու մասին*

*6.Հրազդան համայնքի հնգամյա ծրագրի 2017 թվականի իրականացման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու մասին*

*7. Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 136-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին*

*8. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման շրջանակներում*

*ավտոճանապարհների ... ավտոմեքենայի ձեռքբերման մասին*

*9. Հրազդան համայնքի սեփականություն համարվող գույքը վարձակալության հանձնելու մասին*

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 102*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները ընդունել ի գիտություն և միջոցներ ձեռնարկել հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:*

*Կողմ -0* *Դեմ -5* *Ձեռնպահ -6*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*
*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*
*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*
*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ*
*ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*
*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*
*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*
*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ*
*ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ*
*ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 103-Ն*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Սահմանել Հրազդան համայնքի կամավոր խնդիրները, դրանց ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ՋԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ՋԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ*

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2018թ. օգոստոսի 28 -ի N 103-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հրազդան համայնքի կամավոր խնդիրները, դրանց ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգի հետ կապված հարաբերությունները:
2.Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք)՝ համայնքի ղեկավարը իրականացնում է օրենքում ամրագրված կամավոր լիազորություններ:
3.Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքի շահերին վերաբերող Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, օրենքին, համայնքի ավագանու որոշումներին և այլ իրավական ակտերին չհակասող ցանկացած այլ լիազորություններ:
4.Օրենքով համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1)արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում՝

ա. աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

բ. իրականացնում է միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու ուղղությամբ.

գ. իրականացնում է համայնքի բնակչության ազդարարումը.

դ. աջակցում է արտակարգ իրավիճակներից (բնական և տեխնածին աղետներ) տուժած ընտանիքներին.

2)քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում՝

ա. օրենքով սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.

բ. տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, ձեռնարկում է համապատասխան միջոցառումներ շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու ուղղությամբ.

գ. կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

դ. աջակցում է համատիրությունների կողմից սպասարկվող բազմաբնակարան շենքերի վերանորոգման աշխատանքների իրականացմանը.

ե. ապահովում է համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

զ. կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

է. կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

ը. աջակցում է համայնքային գերեզմանատների պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

թ. համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը.

ժ. կազմակերպում է հանգստի հանրային վայրերի խնամքը և պահպանությունը, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում այդ աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը,

3) հողօգտագործման բնագավառում՝

ա. համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը.

բ. օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.

գ. իրականացնում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի բարելավման աշխատանքներ.

դ. կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման, կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.

ե. աջակցում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքների կազմակերպմանը,

4) առևտրի և ծառայությունների բնագավառում՝

ա. տալիս է ոգելից խմիչքների կամ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն.

բ. տալիս է համայնքի տարածքում բացօթյա վաճառք, տոնավաճառներ կազմակերպելու թույլտվություն.

գ. տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.

դ. տալիս է համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառքի թույլտվություն.

ե. տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն,

5) կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում՝

ա. կազմակերպում է նախադպրոցական և արտադպրոցական կրթության իրականացումը համայնքի տարածքում.

բ. կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների, գրադարանների, թանգարանների, երիտասարդական պալատի, կրթական և մշակութային այլ կազմակերպությունների գործունեությունը, աջակցում է դրանց շահագործմանը, նորոգմանը, անհրաժեշտ գույքի ձեռքբերմանը, միջոցառումների կազմակերպմանը.

գ. ստեղծում է պայմաններ երիտասարդական ծրագրերի և միջոցառումների կազմակերպման, անցկացման համար.

դ. աջակցում է համայնքում երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների իրականացմանը,

6) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում՝

ա. կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության մարզադպրոցների գործունեությունը.

բ. կազմակերպում է ներհամայնքային և միջհամայնքային պարբերական զանգվածային մարզական միջոցառումներ և մրցույթներ.

գ. օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգով աջակցում է համայնքի հավաքական թիմերի մասնակցությանը միջհամայնքային, հանրապետական և միջազգային մրցումներին.

դ. ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով.

ե. նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է մարզական այլ կառույցների շինարարություն, վերանորոգում, ստեղծում է հանգստի գոտիներ.

զ. համայնքի ավագանու սահմանած չափորոշիչներին համապատասխան խրախուսական պարգևներ է հանձնում ներհամայնքային, հանրապետական և միջազգային մրցումներում մրցանակային տեղերի արժանացած մարզիկներին և նրանց մարզիչներին,

7) գյուղատնտեսության բնագավառում՝

ա. կատարում է համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան իրականացնում է գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում.

գ. իրականացնում է գյուղատնտեսական զարգացման ծրագրեր, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում պետական միջոցներով և այլ միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի կազմակերպմանն ու իրականացմանը,

8) շրջակա միջավայրի պահպանության բնագավառում՝

ա. կազմակերպում է համայնքի սեփականություն հանդիսացող հողերի, դրանց վրա գտնվող համայնքային նշանակության բնության, հատուկ պահպանվող տարածքների և այգիների պահպանությունը.

բ. ապահովում է համայնքի սեփականությունը համարվող հողերի պահպանությունը ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական, շինարարական և կենցաղային թափոններով աղտոտումից,

9) զբոսաշրջության բնագավառում՝

ա. գույքագրում և վարում է համայնքի զբոսաշրջային ռեսուրսների (բնական, պատմամշակութային, մարդկային) գրանցամատյանը.

բ. ըստ անհրաժեշտության Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան լիազոր մարմնին տրամադրում է տեղեկատվություն համայնքի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ.

գ. համայնքում սահմանում և տրամադրում է հատուկ կայանման և կանգառի վայրեր զբոսաշրջիկների տրանսպորտային փոխադրամիջոցների համար.

դ. զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման և զբոսաշրջության կայուն զարգացման նպատակով համագործակցում է պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության հետ.

ե. իր լիազորությունների շրջանակում ընդունված որոշումներով խթանում է զբոսաշրջային կառույցների և ենթակառուցվածքների ստեղծմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը միտված միջոցառումների կազմակերպմանը և անցկացմանը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

**ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 104-Ն*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի .*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Սահմանել Հրազդան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները, սոցիալական պաշտպանության բնագավառում Հրազդան համայնքի կամավոր խնդիրների, և դրանց ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2018թ. օգոստոսի 28-ի N 104-Ն որոշման

# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1.Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հրազդան համայնքի ղեկավարին (այսուհետ՝ համայնքի ղեկավար) վերապահված սոցիալական պաշտպանության բնագավառում կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերություններըև Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծման չափորոշիչները :

2.Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք)՝ համայնքի ղեկավարը իրականացնում է օրենքում ամրագրված կամավոր լիազորություններ:

3.Համայնքի ղեկավարը կարող է իրականացնել համայնքի շահերին վերաբերող Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, օրենքին, համայնքի ավագանու որոշումներին և այլ իրավական ակտերին չհակասող ցանկացած այլ լիազորություններ:

4.Համայնքի ղեկավարը իրականացնում է հետևյալ կամավոր /սեփական/ լիազորությունները՝ սոցիալական պաշտպանության բնագավառում.

1) միջոցներ է ձեռնարկում հայտնաբերելու սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքներին.

2) նպաստում է համայնքում բնակվող սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական կարիքների բավարարմանը՝ կազմակերպելով տնային այցելություններ և հնարավորության դեպքում մատուցելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված սոցիալական ծառայություններ կամ ուղղորդելով սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններ կամ մասնագիտացված այլ կազմակերպություններ.

3) որպես «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված աջակցող ցանցի ներկայացուցիչ՝ համագործակցում է վերջինիս մասնակիցների հետ.

4) ապահովում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված տեղական սոցիալական ծրագրերի կազմումը և իրականացումը՝ որպես առանձին ծրագիր կամ որպես համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս.

5. Նշված լիազորություններն իրականացվում են թիրախային և հասցեական մոտեցմամբ՝ համաձայն համայնքի ավագանու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի եզրակացության,

6. Այն դեպքում, երբ համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում, համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

7.Համայնքի ղեկավարին թույլատրվում է արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի (բնական և տեխնածին աղետներ) առաջացմամբ կամավոր լիազորությունների իրականացման համար հատկացնել

համապատասխան ֆինանսական միջոցներ, բայց ոչ ավել, քան տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 1 (մեկ) տոկոսի չափով:
8.Սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման համար սահմանվում են հետևյալ չափորոշիչները (առավելագույն չափերը Հայաստանի Հանրապետության դրամով կամ դրան համարժեք բնաիրային, ծառայությունների տեսքով)՝

1) համայնքի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչին կամ ընտանիքին՝ 20.000 (քսան հազար),
2) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած բնակչին (ընտանիքին)՝ 200.000 (երկու հարյուր հազար),
3) արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամին՝ 15.000 (տասնհինգ հազար),
4) արցախյան պատերազմի 2-րդ,3-րդ կարգի հաշմանդամին՝ 10.000 (տաս հազար).
5) 1941-1945թթ.-ի Հայրենական Մեծ պատերազմի մասնակցին՝ 15.000 (տասնհինգ հազար),
6) զոհված (մահացած) ազատամարտիկի, այդ թվում՝ մարտական գործողությունների և (կամ) հերթափոխի ընթացքում զոհված զինծառայողի ընտանիքին՝ 20.000 (քսան հազար),
7) սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքի անդամի և (կամ) հարազատ չունեցող բնակչի հուղարկավորության համար՝ 50.000 (հիսուն հազար),

9.Մշակութային միջոցառումների կազմակերպման, իրականացման և մասնակցության համար՝ 2.000.000 (երկու միլիոն)՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված միջոցառումների ցուցակի և դրա հիման վրա համայնքի ավագանու կողմից բյուջեով հաստատված հատկացումների շրջանակներում համայնքի ղեկավարի կայացրած որոշումների:

10.Համայնքի ղեկավարի կողմից կամավոր լիազորությունների իրականացման շրջանակներում շահույթ չհետապնդող կազմակերպություններին և ոչ պետական, ոչ ֆինանսական կազմակերպություններին հատկացվելիք (դրամաշնորհներ, նվիրատվություններ և սուբվենցիաներ) ֆինանսական միջոցների առավելագույն չափը սահմանվում է 1.000.000 (մեկ միլիոն) (Հայաստանի Հանրապետության դրամով կամ դրան համարժեք բնաիրային, ծառայությունների տեսքով):

11.Կամավոր լիազորությունների իրականացման համար ֆինանսական միջոցներ հատկացվում են յուրաքանչյուր տարվա համար՝ ըստ տվյալ տարվա բյուջեի հիմքում դրված ծրագրերի:

12. Նույն անձին կամ ընտանիքին օրացուցային տարվա ընթացքում կարող է տրամադրվել մեկից ավել անգամ սոցիալական աջակցություն:

13.Արգելվում է սոցիալական աջակցության տրամադրումը համայնքում հաշվառում չունեցող և (կամ) համայնքում մշտական բնակիչ չհանդիսացող քաղաքացուն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 105*

### *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N50 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 14-ի «Վարչական հանձնաժողով ստեղծելու մասին» N50 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.*
*«1)Մյասնիկ Կոստանյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ-հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Ռոբերտ Դանիելյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար-հանձնաժողովի նախագահ» բառերով.*
*«3)Շոթա Խաչատրյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետ-հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Սամվել Ալոյան-Հրազդան համայնքի ղեկավարի օգնական-հանձնաժողովի անդամ»*
*«4) Պետիկ Մարգարյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետի տեղակալ-հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Երվանդ Հակոբյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի տարածքային զարգացման, հողային կադաստրի և գյուղատնտեսության բաժնի պետ» բառերով:*
*«5)Էդվարդ Տիգրանյան-Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետի տեղակալ- հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել «Վարդան Մանուկյան- Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի*

տրանսպորտի, առևտրի և սպասարկումների կանոնակարգման բաժնի գլխավոր մասնագետ» բառերով:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ՁԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 106*

## *ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿ ԿԱՀԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, հիմք ընդունելով Սթրիթ Վորքաութ Հայաստանյան ֆեդերացիայի նախագահ Դ. Հակոբյանի 2018 թվականի օգոստոսի 17-ի դիմումը և համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Սթրիթ Վորքաութ Հայաստանյան ֆեդերացիային Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Շառավանային պուրակի «Բարության Կենտրոն»-ից բարեգործական հիմունքներով տրամադրել 0,0096 հա տարածք՝ մարզական գույքով և մարզական սարքավորումներով կահավորելու նպատակով:*

*Կողմ -10* *Դեմ -0* *Ձեռնպահ -1*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ*

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 107-Ն*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հաստատել Հրազդան համայնքի հնգամյա ծրագրի 2017 թվականի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱԹԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ*

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
Հրազդան համայնքի ավագանու
2018թ. օգոստոսի 28-ի թիվ 107-Ն որոշման

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*1 Հրազդան համայնքում 2017թ-ի ընթացքում պլանավորվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները:*

| **1.«Համայնքի երաժշտական և արվեստի դպրոցների նորոգում, ջեռուցման համակարգի կառուցում»** | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք/հազ.դր | Շեղում | Մեկնաբանություն |
| Շենքի մասնակի վերանորոգում ծրագիր | 1 | 1 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | - | - | - | Ծրագրի իրականանացման համար ֆինանսական միջոցներ չեն ներդրվել |
| **2 « Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում»** | | | | |
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| . Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում | 30 | 30 | 0 | Շեղում չկա |
| 1.Վթարային բնակարանների գույքագրում, բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | 1 | 1 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | 16000.0 | 11733.6 | 4266.4 | Ծրագրի իրականանացման համար ֆինանսական միջոցներ չեն բավարարել |
| **3« Համայնքի փողոցների և ճանապարհների նորոգում և հիմնանորոգում »** | | | | |
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| 1.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | 2 | 2 | 0 | Շեղում չկա |
| 2. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում | 2 | 2 | 0 | Շեղում չկա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | 70000.0 | 40438.8 | 29561.2 | Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն բավարարել |
| **4«Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում ու ասֆալտապատում»** | | | | |
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային աժեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| 1. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում | 1 | 1 | 0 | Շեղում չկա |
| 2.Բակերի բարեկարգում, ասֆալտապատում | 50 | 50 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի իրականացման համար ֆինասական միջոցներ չեն ներդրվել | - | - | - | 1.Ֆինանսավորման համար պետական բյուջեից հատկացումներ չեն կատարվել<br>2.Համայնքի բյուջեում ֆինանսական միջոցների բացակայության հետ կապված |
| **5 « Վարչական շենքի ջեռուցման ցանցի կառուցում »** | | | | |
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային աժեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| 1.Բրեկարգում, ջեռուցման համակրգերի կառուցում | 1 | 1 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ. դրամ | 16500.0 | 16407.1 | 92.9 | Շեղում չկա, հաշիվ-ապրանքագրերով կազմել է 16407.1 հազար դրամ |
| **6 « Էներգախնայողության եւ վերականգնվող էներգետիկայի ծրագրերի իրագործում Մուր մանկապարտեզներում ջեռուցման ցանցերի կառուցում, պատուհանների փոխում, տանիքների հիմնանորոգում »** | | | | |
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային աժեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| 1. Ջեռուցման ցանցերի կառուցում, պատուհանների փոխարինում նորերով, տանիքների հիմնանորոգում | 12 | 2 | 10 | Ջեռուցման ցանցերի կառուցում, պատուհանների փոխարինում նորերով, տանիքների հիմնանորոգում կատարվել է թիվ 12, 13 մանկապարտեզներում |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ. դրամ | 127600.0 | 22551.0 | 105049.0 | Ջեռուցման ցանցերի կառուցում, պատուհանների փոխարինում նորերով, տանիքների հիմնանորոգում կատարվել է թիվ 12, 13 մանկապարտեզներում Վճարումը կատարվելու է 25 տարվա ընթացքում |

| 7 « Համայնքի 2 մարզադպրոցների մասնակի վերանորոգում» | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Մարզաարահների բարեկարգում, վերանորոգում | 2 | 2 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի իրականանացման համար ֆինասական միջոցներ չեն ներդրվել | - | - | - | Ծրագրի իրականանացման համար ֆինանսական միջոցներ չեն ներդրվել, դոնոր կազմակերպություն չլինելու պատճառով |

| 8 « Քաղաքի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում » | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում | 1 | 1 | 0 | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ. դրամ | 7200.0 | 6702.0 | 498.0 | Շեղում չկա, հաշիվ-ապրանքագրերով կազմել է 6702.0 հազար դրամ Պայմանագրով վճարումը կատարվելու է 25 տարվա ընթացքում: |

| 9.« Բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգում » | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| 1. Վերելակների նորոգում | 5 | 5 | - | Շեղում չկա |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | 8000.0 | 500.0 | 7500.0 | Ծրագրի իրականանացման համար ֆինանսական միջոցները չեն բավարարել |

| 10.« Աղբավերամշակման ձեռնարկության կառուցում » | | | | |
|---|---|---|---|---|
| **Կատարված աշխատանքներ** | Թիրախային ածեք | Փաստացի արժեք | Շեղում | Մեկնաբանություն |
| . Աղբավերամշակման ձեռնարկություն կառուցում | 1 | 1 | - | Ունենալ աղբավերամշակման ձեռնարկություն, որպեսզի աղբը բաց եղանակով չայրվի և ախտոտի շրջակա միջավայրը |
| Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ | - | - | - | Ծրագրի իրականանացման համար ֆինանսական միջոցներ չեն ներդրվել, դոնոր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | *կազմակերպություն չլինելու պատճառով* |

**11.« Հարավային և Մաքրավան թաղամասերի կոյուղու ցանցի կառուցում և նորոգում »**

| **Կատարված աշխատանքներ** | *Թիրախային արժեք* | *Փաստացի արժեք* | *Շեղում* | *Մեկնաբանություն* |
|---|---|---|---|---|
| *Կառուցել Հարավային թաղամասում կոյուղու ցանց և վերանորգել Մաքրավան թաղամասի կոյուղու ցանցը* | *2* | *2* | *0* | *Նոր կառուցված Հարավային թաղամասում ունենալ կոյուղու ցանց և վերանորգված կոյուղու ցանց Մաքրավան թաղամասում* |
| *Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ բարեգործություն հազ դրամ* | - | - | - | *Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցներ չեն ներդրվել, դոնոր կազմակերպություն չլինելու պատճառով* |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 108-Ն*

*ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 136-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33 և 34 հոդվածների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հրազդան համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 136-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*1. Ծախսային մասում՝*

*1) 9 բաժնի 5 խմբի 1 դասի 51 ծրագրի Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «3400.0» թիվը փոխարինել «1700.0» թվով:*

*2) 8 բաժնի 2 խմբի 3 դասի 51 ծրագրի Մշակույթի կենտրոնի «Հատուկ նպատակային այլ նյութեր» /4269/ հոդվածում «3000.0» թիվը փոխարինել «1400.0» թվով, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /4239/ հոդվածում «2500.0» թիվը փոխարինել «1500.0» թվով:*

*3) 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի «Էներգետիկ ծառայություններ» /4212/ հոդվածում «30297.0» թիվը փոխարինել «33897.0» թվով:*

*4) 10 բաժնի 7 խմբի 1 դասի 54 ծրագրի «Այլ նպաստներ» /4729/ հոդվածում «11300.0» թիվը փոխարինել «11800.0» թվով:*

*5) 1 բաժնի 6 խմբի 1 դասի 60 ծրագրի «Պարտադիր վճարներ» /4823/ հոդվածում «3000.0» թիվը փոխարինել «3200.0» թվով:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ

ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*28 օգոստոսի 2018թվականի N 109*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՎԱՔ ՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին ներկայացնելու՝ Հրազդան համայնքի կենցաղային, ոչ կենցաղային և տեխնիկական աղբի հավաքումը առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով աղբատար մեքենայի ձեռքբերման հայտը՝ համաձայն N 1,2 հավելվածների:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Հավելված 1*
*Հրազդան համայնքի ավագանու*
*2018 թվականի օգոստոսի 28-ի*
*N 109 որոշման*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԱՂԲԱՀԱՎԱՔ ՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ*

*Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանը, կողային բեռնավորմամբ աղբատար ավտոմեքենա ձեռք բերելու նպատակով, հայցում է իրականացնում՝ պետության կողմից սուբվենցիա ստանալու համար:*

*Գնման առարկա է հանդիսանում Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար տեխնիկայի՝ կողային բեռնավորմամբ աղբատարի ձեռքբերումը, որի տեխնիկական ամբողջական բնութագիրը, տվյալները, գնային և ոչ գնային նկարագիրը՝ հավելված 2:*

*Ծրագրի նպատակն է ավելացնել Հրազդանի համայնքի աղբահավաք մեքենաների քանակը, ինչպես նաև աղբարկղների քանակը հասցնել մինչև 30-ի:*

*Քանի որ համայնքը կազմված է 7 թաղամասերից, առկա միջոցները չեն բավարարում, որպեսզի ճիշտ ժամանակին վերջիններս սպասարկվեն:*

*Ձեռք բերելով անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ և աղբամաններ՝ հնարավոր կլինի պատշաճ կերպով կազմակերպել համայնքի աղբահանությունը, որը կնպաստի համայնքի թաղամասերի աղտոտվածության խնդրի լուծմանը, բնակչության ապրելակերպի բարելավմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և մի շարք այլ կարևորագույն հարցերի լուծմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կբացվի 2 աշխատատեղ (մեկ վարորդ, մեկ բանվոր) աշխատատեղ:*

*Ծրագրի յուրաքանչյուր արդյունքին հասնելու համար ստեղծվել է հանձնաժողով, կազմվել մրցույթի հայտարարություն, անցկացվել մրցույթ (մասնակիցների թիվը պետք է լինի նվազագույնը երեքը) և ընտրվել է վաճառող կազմակերպություն, որն ունի ծրագրով նախատեսված գործունեության համար պահանջվող մեքենայի լավագույն օրինակը, և որը կտրամադրի նշված տեխնիկական բնութագրով աղբատար ավտոմեքենա՝ կողային բեռնավորմամբ:*

*Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել կողային բեռնավորմամբ աղբատար ավտոմեքենայի մատակարարման պայմանագիր: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 22800000/ քսաներկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որից՝ համայնքի կողմից ներդրվող չափաբաժնի չափը կազմում է 1140000/Մեկ միլիոն հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ( ծրագրի ընդհանուր բյուջեի 5%-ը):*

Հավելված 2
Հրազդան համայնքի ավագանու
2018 թվականի օգոստոսի 28-ի
N109 որոշման

# ՀԱՅՏ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի կարիքների համար գնանշման հարցում (ԳՀ) ընթացակարգով Աղբատար կողային բեռնավորմամբ՝ գնման

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 34141320 | Աղբատար կողային բեռնավորմամբ | Բելոռուսիա | Վառելիքի բաքի տարողունակությունը՝ 130լ,<br><br>թափքի տարողությունը՝ 10մ³, խտեցման գործոնը՝ 4,<br><br>ընդհանուր երկար./լայն./բարձր.՝ 5900/2500/3400մմ,<br><br>մանիպուլյատորի բեռնունակությունը՝ 700կգ,<br><br>թափոնների ստեղծման զանգվածը՝ 3150 կգ,<br><br>ընդհանուր քաշ՝ 10100կգ,<br><br>փոխանցման տուփը՝ մեխանիկական, 5 աստիճանի,<br><br>քարշակի տեսակը՝ 4x2 հետևի,<br><br>շարժիչի հզորությունը՝ 155 ձ/ուժ,<br><br>շարժիչի տեսակ՝ ММЗ-Д 245.30 դիզելային,<br><br>շարժիչի աշխատանքային ծավալ՝ 4.75լ | հատ | 22 800 000 | 22 800 000 | 1 | Ք. Հրազդան, | 1 | Պայմանագրի կնքման օրվանից 20 օրյա ժամկետում: |

Մատակարարումը մատակարարի հաշվին, ք. Հրազդան, պայմանագրի կնքման օրվանից հաշված 20 օրյա ժամկետում:

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝ Վաղինակ Պողոսյան

Արթուր Հունանյան

Հուսիկ Պողոսյան

*Հայտի կնքված և ստորագրված բնօրինակի պատճենն ուղարկվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն (այսուհետ՝ ՏԿԶՆ) էլեկտրոնային փոստով:*
*Բնօրինակը (համակարգչով լրացված) հանձնվում է ՏԿԶՆ*

| **Պաշտոնական օգտագործման համար** | | | |
|---|---|---|---|
| Սուբվենցիայի Հայտի գրանցման ամսաթիվը | | Հաշվառման համարը | |
| Սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր | | Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կցվում են | |
| Տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ծրագիր | | Հայտը պատշաճ կերպով կազմված և ստորագրված է | |
| Մեքենասարքավորումների ձեռք բերման ծրագիր | | Պահանջվող այլ փաստաթղթերը կցված են | |
| Հայտը համապատասխանում է սուբվենցիաների տրամադրման նպատակով հայտերի գնահատման կարգի 1, 2 և 3-րդ կետերի պահանջներին | | Հայտը համաձայնեցված է համապատասխան մարզպետարանի հետ և համապատասխանում է համայնքի 5 ամյա զարգացման ծրագրին | |

## ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրային ՀԱՅՏ

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման շրջանակներում աղբահավաք մեքենայի ձեռքբերում: |
| **Մարզ** | *Կոտայքի մարզ* |
| **Համայնքը /համայնքները** | *Հրազդանի համայնք* |
| **Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից** | *42 կմ* |
| **Սահմանամերձ , բարձր լեռնային համայնք** | *բարձր լեռնային համայնք* |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | Հրազդան համայնքը բաղկացած է յոթ թաղամասերից՝ երկու քաղաքային և հինգ գյուղական: Համայնքը ունի երեք աղբահավաք ավտոմեքենա և երկու ինքնաթափ ավտոմեքենա աղբահանություն կազմակերպողու համար, որը ոչ բավարար է համայնքում աղբահանություն կազմակերպելու համար: Քաղաքի երկարությունը մի ծայրից մյուսը կազմում է 25 կիլոմետր: Համայնքի բնակչությունը 58383 մարդ է: |
| **Ծրագրի իրականացման նպատակը** | Ծրագրի նպատակն է ավելացնել Հրազդանի համայնքի աղբահավաք մեքենաների քանակը, ինչպես նաև աղբարկղների քանակը հասցնել մինչև 30-ի:<br>Քանի որ համայնքը կազմված է 7 թաղամասերից, առկա միջոցները չեն |

| | |
|---|---|
| | բավարարում, որպեսզի ճիշտ ժամանակին վերջիններս սպասարկվեն:<br>Ձեռք բերելով անհրաժեշտ քանակությամբ մեքենաներ և աղբամաններ՝ հնարավոր կլինի պատշաճ կերպով կազմակերպել համայնքի աղբահանությունը, որը կնպաստի շրջակա միջավայրի պահպանությանը: |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում** | Քանի որ ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են, ծրագրի իրականացումից հետո համայնքին՝ սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցի՝ աղբահավաք մեքենայի, արժեքը կավելանա 22800000 ՀՀ դրամի չափով և կկազմի 27290000 ՀՀ դրամ: |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | Ակնկալվում է Հրազդան համայնքի երկու քաղաքային և հինգ գյուղական թաղամասերի աղբահավաքության խնդրի լուծումը:<br>Եթե աղբահանությունը կազմակերպվի օրական 2-3 անգամ քաղաքային թաղամասերում (քանի որ ավելի խիտ են բնակեցված), 1-2 անգամ՝ գյուղական թաղամասերում, ապա հնարավոր կլինի աղտոտվածության մակարդակը նվազեցնել մեծ տեմպերով: |
| **Ծրագրի յուրաքանչյուր արդյունքի հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները** | 1. Հանձնաժողովի ստեղծում,<br>2. կազմել մրցույթի հայտարարություն,<br>3. անցկացնել մրցույթ (մասնակիցների թիվը պետք է լինի նվազագույնը երեքը),<br>4. ընտրել վաճառող կազմակերպությանը, որն ունի ծրագրով նախատեսված գործունեության համար պահանջվող մեքենայի լավագույն օրինակը, և որը կտրամադրի նշված տեխնիկական բնութագրով աղբատար ավտոմեքենա՝ կողային բեռնավորմամբ: |
| **Ծրագրի ազդեցությունը շահառուների վրա** | -Հրազդանի համայնքի բնակչությունը կազմում է 58383 մարդ,<br>-կբարձրանա բնակչության ապրելակերպի հարմարավետության մակարդակը: |
| **Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր** | Հիմք ընդունելով ակնկալվող ավտոմեքենայի ձեռքբերումը՝ ծրագրի իրականացման ընթացքում կբացվի 2 աշխատատեղ (մեկ վարորդ, մեկ բանվոր) աշխատատեղ: |
| **Ծրագրի սպասվող միջնաժամկետ և երկարաժամկետ արդյունքները** | Նախագծի իրականացումից հետո կունենաք՝<br>▪ բնակչության կենսապայմանների բարելավում,<br>▪ շենքերի բակերը կլինեն ավելի մաքուր և անվտանգ երեխաների (և ոչ միայն) համար,<br>▪ շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցում: |
| **Համայնքի 2017 թվականի բյուջեն և բյուջեի կատարողականը** | 2017 թվականի բյուջեն կազմում է 1318865,7 հազար դրամ, որից վարչական մասը՝ 1199737,2 հազար դրամ, ֆոնդային մասը՝ 119128,5 հազար դրամ:<br>Ֆոնդային մասի ծախսերի բացվածքը կազմում է՝<br>1. 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» - 15310,0 հազար դրամ<br>2. 5134 «Նախագծահետազոտական ծախսեր» - 5835,8 հազար դրամ<br>3. 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» - 49021,7 հազար դրամ<br>4. 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ նորոգում» - 48961,0 հազար դրամ |

| | |
|---|---|
| **Համայնքի 2018 թվականի բյուջեն** | Համայնքի 2018 թվականի բյուջեն կազմում է 1281197,3 հազար ՀՀ դրամ, որով վարչական մասը՝ 1191197,3 հազար դրամ, իսկ Ֆոնդային մասը՝ 90000,0 հազար դրամ:<br>Ֆոնդային մասի պլանավորված ծախսերը կազմում են՝<br>1. 5129 «Այլ մեքենաներ և սարքավորումներ» - 570 հազար դրամ<br>2. 5112 «Շենքերի և շինությունների կառուցում» - 21556,6 հազար դրամ<br>3. 5113 «Շենքերի և շինությունների կապիտալի նորոգում» - 62363,4 հազար դրամ<br>4. 5122 «Վարչական սարքավորումներ» - 1750,0 հազար դրամ,<br>5. 5134 «Նախահետազոտական ծախսեր» - 2800,0 հազար դրամ: |
| **Համայնքի 2018 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թվականի կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Հրազդան համայնքի 2018թ. կանխատեսվող եկամուտները կազմում են 1281197,3 հազար ՀՀ դրամ, ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2018 թ. կանխատեսվող մուտքերը:<br>Այն ուղղվելու է ներքոհիշյալ պարտադիր ծախսերին<br>– Համայնքի աշխատողների աշխատավարձեր և հարկեր – 720.000.000 դրամ<br>– Հեղուկ վառելիք և ավտոգազ – 62.600.000 դրամ<br>– Հոսանք, գազ (ջեռուցում), վառելափայտ – 83.396.200 դրամ<br>– Սնունդ մանկապարտեզներին – 87.700.000 դրամ<br>– Էներգոխնայողության ծրագիր – 43.000.000 դրամ<br>– Կապ, ջուր – 10.000.000 դրամ<br>– Մեքենամեխանիզմների վարձակալություն – 18.500.000 դրամ<br>– Ճանապարհների ընթացիկ նորոգում – 20.000.000 դրամ<br>– Նախագծահաշվարկային աշխատանքներ – 1.000.000 դրամ<br>– Նախորդ տարվանից մնացած պարտքեր – 150.000.000 դրամ<br>– Մշակութային և սպորտային միջոցառումներ, գրասենյակային նյութեր, համակարգչային սարքավորումներ, գույքի ձեռքբերում, տրանսպորտային ծառայություններ, դրամական օգնություններ սոցիալապես անապահովներին 30.000.000 դրամ<br>– Կողային բեռնավորմամբ աղբատարի գնում – 1.140.000 դրամ: |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն** | 22800000/Քսաներկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ (100%) |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | 1140000/Մեկ միլիոն հարյուր քառասուն հազար/ ՀՀ դրամ (5%) |
| **Այլ ներդրողներ** | Չկան |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | Ակիզբ՝ 23.08.2018 թ. Տևողությունը՝ 30.12.2018 թ. |
| **Ծրագրի ծախսերը** | Ըստ ծրագրի, նախատեսվում է ձեռք բերել աղբատար՝ կողային բեռնավորմամբ, որն ունի հետևյալ տեխնիկական բնութագիրը.<br>• արտադրության տարեթիվը՝ 2018թ.,<br>• վառելիքի բաքի տարողունակությունը՝ 130լ,<br>• թափքի տարողությունը՝ 10մ$^3$,<br>խտեցման գործոնը՝ 4,<br>• ընդհանուր երկար./լայն./բարձր.՝ 5900/2500/3400մմ,<br>• մանիպուլյատորի բեռնունակությունը՝ 700կգ, |

| | |
|---|---|
| | • թափոնների ստեղծման զանգվածը՝3150 կգ,<br>• ընդհանուր քաշ՝10100կգ,<br>• փոխանցման տուփը՝մեխանիկական, 5 աստիճանի,<br>• քարշակի տեսակը՝4x2 հետնի,<br>• շարժիչի հզորությունը՝155 ձ/ուժ,<br>• շարժիչի տեսակ՝ММЗ-Д 245.30 դիզելային,<br>• շարժիչի աշխատանքային ծավալ՝4.75լ<br>Աղբատարի նախահաշվարկային գինը կազմում է 22800000/Քսաներկու միլիոն ութ հարյուր հազար/ ՀՀ դրամ |
| **Ամսաթիվ** | 23_08_2018թ. |


**Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝** **Վանուհի Բարեղամյան**

**Հեռախոս 098908893**

**էլ. Փոստ vanuhi.bareghamyan94@gmail.com**


**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԿՏ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301,ք.Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

*28 օգոստոսի 2018թվականի N 110*

## *ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը.*

*Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝*

*1.Հրազդան համայնքի սեփականություն համարվող Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի օգոստոսի 23 փողոցի 72 հասցեում գտնվող Մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի շենքից 75քմ տարածք վարձակալության հանձնել Մարինե Թարխանյանին՝ պարի դասընթացներ անցկացնելու համար:*
*Յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 15000 (տասնհինգ հազար) դրամ վարձավճար մեկ տարի ժամկետով:*

*Կողմ -11* *Դեմ -0* *Ձեռնպահ -0*

*ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆՎԵՐ*

*ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ*

*ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ*

*ԴԱՆԻԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՄԵԼՍԻԿ*

*ԶԱՔԱՐՅԱՆ ՆՎԵՐ*

*ԼԵՎՈՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ*

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ*

*ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ*

*ՄՈՒՐԱԴՅԱՆ ԽԱՉԻԿ*

*ՆԵՐՍԻՍՅԱՆ ՌՈՄԻԿ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*
*ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝* *Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ*